«ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ» ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԲԱՆԱԽՈՍ

1999 06 16 Թիվ 28

1999 06 10

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՄՈՀԱՄԱԴ ՖԱՐՀԱԴ ՔՈԼԵՅՆԻ

ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության ժամանակավոր հավատարմատար



ՄԱԿ-ի ընդհանուր համաժողովն անցյալ տարվա սեպտեմբերին հաստատեց Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ պարոն Խաթամիի առաջարկությունը՝ 2001 թվականն իբրև «Քաղաքակրթությունների երկխոսության» տարի հռչակելու վերաբերյալ: Անդամ-պետությունների կողմից Ընդհանուր համաժողովի բանաձևի միահամուռ ընդունումը տարբեր մշակույթներ ու քաղաքակրթություններ կրող ժողովուրդների միջև կառուցողական և արդասաբեր կապերի ստեղծման նպատակով նոր հորիզոններ գտնելու միջազգային հանրության կամքի և անհրաժեշտության վկայությունն է: Իրականում քաղաքակրթությունների երկխոսության նպատակներից մեկը տարբեր քաղաքակրթությունների շփման որակի բարձրացման համար որևէ շրջանակի ստեղծումն է՝ կայուն խաղաղության գործոնների ամրապնդման և պատերազմների ծագման պատճառների չեզոքացման նպատակով:

> *«... Մարդկությունը 21-րդ դարի իր առաջնահերթությունները որոշելու հարցում նոր հայեցակարգի խիստ անհրաժեշտություն ունի:»*

Այստեղ հարկ եմ համարում մեջբերում կատարել պարոն Խաթամիի խոսքերից, որոնք նա արտահայտել է վերջերս՝ Թեհրանում հավատարմագրված դեսպանների հետ հանդիպման ժամանակ. «Նախորդ դարը պատերազմների ու խաղաղությունների դար էր: Հարյուրամյակ, ուր կրոնը, մշակույթը և գիտությունը ծառայում էին քաղաքականությանը, և ամենայն ամոթով ու ափսոսանքով պետք է նշել, որ քաղաքականությունը ծառայում էր որոշակի խմբերի ռազմական և տնտեսական շահերին: Եկեք ձեռք-ձեռքի տանք և քաղաքականությունը ծառայեցնենք մշակույթին: Եկեք հաջորդ դարում խոսենք մշակույթի լեզվով՝ ցանկանալով ողջ մարդկությանը խաղաղություն ու բարօրություն»:

Ինչպես տեսնում ենք, քաղաքակրթությունների երկխոսությունը նուրբ հետևության արդյունք է, որը նախ վկայում է այն մասին, թե ԻԻՀ-ն ընդունում է քաղաքակրթությունների բազմազանությունը և այն, որ այդ հասկացությունն անխուսափելի իրողություն է: Ուստի հպարտ ենք, որ այն ժամանակ, երբ քաղաքակրթությունների բախումն ու հակադրությունը մի շարք փորձագետների թեման է, այն ժամանակ, երբ երկրների մակարդակով առկա է քաղաքակրթությունների բախման վտանգ և անգամ նույն քաղաքական միավորման մեջ մշակութային տարբեր խմբերի միջև բախում է նկատվում, Իրանի նախագահն իբրև ԻԻՀ արտաքին քաղաքական ծրագիր, խոսում է քաղաքակրթությունների սրտակցության և ինտեգրացման մասին՝ ավետաբերելով 21-րդ դարի շեմին ժողովուրդների բարեկամությունը: Միաժամանակ, եթե թռուցիկ հայացք նետենք վերջին 400 տարվա պատմությանը, կտեսնենք, որ տարբեր ժամանակաշրջաններում քաղաքակրթությունները բախվել են, որոնք բոլորն իրականում եղել են ուժի գործադրում պատմության փարավոնների կողմից աշխարհի մնացած ժողովուրդների հանդեպ: Այդ փուլերին հատկանշական է հաղթանակը ցեղասպանության և տեղական մշակույթի կործանման հաշվին, շահադիտական նպատակներով միլիոնավոր մարդկանց բռնի գաղթեցումը:

Փաստորեն, այս գործոնները պատճառ դարձան, որ մի շարք մարդիկ, ինչպես Հանտիգոնը, կանխատեսեն մշակութային տարանջատման հետևանքով քաղաքակրթությունների միջև բախման ու բռնության գաղափարը: Այլոք նաև կանխագուշակում են, թե զարգացող և չզարգացած երկրների միջև հակադրության արդյունքում մեծ խառնաշփոթ կստեղծվի աշխարհում: Այդուհանդերձ պետք է նշել, որ այս տեսակետների թերությունը կայանում է նրանում, որ շատ պարզամիտ են: Պարզամտության պատճառով և իրատեսության պատրվակով այս տեսակետներում անտեսվել են պատմության խորքային բարդ շերտերը: Դրանք բոլորը հակված են դեպի ռեալիզմն ու պատմությունը բռնությամբ առաջ մղելուն, իրենց վերլուծություններում չեն պահպանել ռեալիզմի և պրագմատիզմի միջև տարբերությունը: Նրանք մարդկային զարգացման որոնող և բարդ գործընթացը դիտում են երևակայական թշնամիների դեմ ծրագրեր մշակելու նեղ հեռապատկերից: Արդյունքում այդ կանխատեսումները հեշտությամբ անտեսում կամ թերագնահատում են այն պոտենցյալ ուժը, որն առկա է մարդկային բազմազան հասարակարգերում և որն ի վիճակի է համախմբել հավաքական ջանքերն ավելի լավ ըմբռնման ու միմյանցից սովորելու համար:

> *«Քաղաքակրթությունների միջև երկխոսությունը նման է նանապարհի, որ մեզ ուղեկցում է դեպի նիշտ գիտակցումը և եթե բարեկամության չհանգեցնի, առնվազն իր հետ կրերի փոխըմբռնում և փոխադարձ հարգանք:»*

Վերջին տարիների բախումներն ու ցավալի իրադարձությունները հրամայական են դարձնում հեռատես և մտավոր ձևերի ստեղծումը՝ «սառը պատերազմի» ժամանակաշրջանի միջազգային հարաբերությունների երկբևեռ կառույցին փոխարինելու համար: Հարկ է նշել, որ 20-րդ դարի իրադարձություններն ապացուցեցին այն ճշմարտությունը, որ մարդկությունը 21-րդ դարի իր առաջնահերթությունները որոշելու հարցում նոր հայեցակարգի խիստ անհրաժեշտություն ունի: Այլ խոսքերով ասած, հարկավոր է այնպիսի մի ձև, որում երկիր մո-

Մոհամադ Ֆարհադ Քոլեյնին ծնվել է 1960թ. Շիրազ քաղաքում: Մասնագիտությամբ միջազգային հարաբերությունների վերլուծաբան է, Եվրոպայի, ԱՊՀ-ի և Կովկասի հիմնահարցերի փորձագետ:

Արտասահմանյան գործուղումների մեջ է եղել Կուբայում, Իսպանիայում: Նախկինում եղել է Հայաստանում Իրանի դեսպանի տեղակալը: Մինչև ՀՀ-ում ԻԻՀ ժամանակավոր հավատարմատար նշանակվելը եղել է Իրանի ԱԳ նախարարի հատուկ օգնականի խորհրդական: Տիրապետում է անգլերեն և իսպաներեն լեզուներին:

Ամուսնացած է, ունի երեք դուստր:

լորակի ավելի շատ բնակիչներ կարողանան ապրել խաղաղ, անվտանգ ու բարգավաճ կյանքով: Այս նոր ձևը պետք է ստեղծի այնպիսի հիմք, որից օգտվելով մարդիկ կարողանան մեծացնել իրենց դիմադրողականությունը պատերազմի և բռնության ժանդախտի հանդեպ, ստեղծեն նոր եղանակներ ապագա հիմնահարցերին դիմագրավելու համար:

Մեր համոզմամբ, քաղաքակրթությունների միջև երկխոսությունը, համաշխարհային քաղաքացիական հասարակության ձևավորումը, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցությունն ապագա հարյուրամյակի առաջնահերթություններն են: Միջազգային հարաբերությունները պետք է ձևավորվեն մշակույթների ու ժողովուրդների միջև փոխըմբռնման հիման վրա, տարբեր մշակույթների պետք է առիթ տրվի պաշտպանել իրենց ինքնությունն ու արժանիքները, նույնացնել դրանք, աշխարհը պետք է թափանցիկ դարձնի իր ընկալումը մոդեռնիզմի և քաղաքակրթության տարբերակման հատկանիշների վերաբերյալ:

«Մենք մարդկային ծաղկանոցում մեզ չենք դատապարտում մեկ ծաղկի ընտրությանը»:

Քաղաքակրթությունների միջև երկխոսությունը հեռատեսական մտածողություն է, որը մարդկային հասարակության տարբեր երանգները չի դիտում իբրև մշակութային տարանջատման սահմանագծեր, այլ որպես ուժի, զարգացման և աճի աղբյուր: Ոչ պետք է հեռու մնալ արևելյան և արևմտյան մատերիալիզմի այն գաղափարից, ըստ որի արտադրական գործիքներն ու տեխնոլոգիաները ներկայացվում են իբրև նոր մարդ և մոդեռնիզմ: Իրավամբ քաղաքակրթությունն ու մոդեռնիզմը միմյանցից տարանջատված երկու կատեգորիաներ են, ինչպես որ կապիտալը բարոյականություն չի ծնում:

Քաղաքակրթությունների միջև երկխոսությունն ի հեճուկս կարճատես ջանքերի, մշակութային համապարփակ տարբերակ է փոխըմբռնման, միմյանց ուսանելու, այժմյան մարդկային հիմնախնդիրներին դիմագրավելու համար և ուղի է գիտակցելու այն, թե քննադատությունը մեզ համար կառուցողական և ապագայի բարեկամն է:

Քաղաքակրթությունների միջև երկխոսությունը նման է ճանապարհի, որ մեզ ուղեկցում է դեպի ճիշտ գիտակցումը և եթե բարեկամության չհանգեցնի, առնվազն իր հետ կբերի փոխըմբռնում և փոխադարձ հարգանք: Իրավամբ ողջ ճշմարտությունը չի տեղավորվում մարդկային բանականության մեջ: Սրանից ելնելով է, որ անհրաժեշտ ենք համարում ծանոթացնել, պարզաբանել և հիմնավորել քաղաքակրթությունների միջև երկխոսության սկզբունքները: Սա իրողություն կդառնա հոգևորականների ու մտավորականների, բոլոր խմբերի ու մարդկանց, պետական և ոչ պետական կազմակերպությունների միջև նման մտքերի փոխանակման շնորհիվ: Այլ խոսքով ասած, այսօր, երբ միջազգային հանրությունը կարևորել է քաղաքակրթությունների միջև երկխոսությունը երրորդ հազարամյակի նախաշեմին, անհրաժեշտ է քաղաքակրթությունների միջև երկխոսությունը ժողովուրդների մոտ հիմնավորելու համար աշխատանքներ իրականացվեն:

Իհարկե, մեր կարծիքով, երկխոսությունը տեսաբանների, փիլիսոփաների, մտավորականների, արվեստագետների ու մշակույթի մարդկանց գործն է և նրանք իրականում այդ երկխոսության շարժիչ ուժն են: Անշուշտ, քաղաքական գործիչներն էլ կարող են երկխոսության մեջ բարյացակամ մասնակցություն ունենալ: Մեր կարծիքով, պետություններն ու ՄԱԿ-ը չնայած պետք է նման երկխոսության հովանավորը լինեն, սակայն չպետք է միայնակ ղեկավարեն այն: Այլ խոսքերով ասած, երկխոսությունը միայն պետությունների իրավասության շրջանակներում չպետք է լինի, քանզի այդ պարագայում նրա կառավարումը անկեղծ չի լինի:

Հուսով եմ, Հայաստանի ամերիկյան համալսարանի հատուկ դասընթացների բաժնի «Դասախոսությունների շարք» ծրագիրը նույնպես կկարողանա դերակատարություն ունենալ այս բնագավառում:

Վերջում անհրաժեշտ եմ համարում սիրելի վերլուծաբաններին տեղեկացնել, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը գնահատում և կարևորում է այն բոլոր ջանքերն ու նախաձեռնությունները, որոնք իրականացվում են աշխարհում խաղաղություն ու բարգավաճում հաստատելու համար:

«Մենք մարդկային ծաղկանոցում մեզ չենք դատապարտում մեկ ծաղկի ընտրությանը»:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- Տարածաշրջանային համագործակցությունը Դուք նշեցիք որպես ապագա հարյուրամյակի առաջնահերթություններից մեկը: Գալիք դարում ինչպիսի՞ երանգներով եք տեսնում համագործակցությունը մեր տարածաշրջանում:

- Մենք գտնում ենք, որ մշակութային կապերը, պետությունների միջև համագործակցությունը սերտ առնչվում են տարածքի, հողի հետ: Որոշակի խնդիրներ, հարցեր այդքան սերտ չեն առնչվում, այսպես ասած, ընտրովի քաղաքականության հետ: Մի օրինակ բերեմ Հայաստանի առնչությամբ: Հայկական գենն արտադրող, ստեղծագործող և ոչ թե սպառող գեն է: Ինչքան էլ Հայաստանը շարժվի դեպի իր արտադրական կարողություններն ավելի բարելավելու, ինքնապահովման հասնելու համար, պետք է անպայման արտադրական այդ գործընթացում նկատի ունենա հիմնական, առաջնային նյութերի և շուկայի ուսումնասիրության խնդիրները: Այդ իսկ պատճառով, անկախության ապահովման, զարգացման համար պետք է մեծացնի իր կարողությունները տարածաշրջանային միջավայրում: Եթե այսօր ուշադրություն դարձնենք ԱՊՀ երկրներին, կարող ենք հստակ նկատել, թե հաղորդակցման ուղիներն ինչպիսի դերակատարություն կարող են ունենալ երկրների անկախության գործում: Ընդհանրապես, տարածաշրջանային համագործակցությունն, անկախ քաղաքակրթությունների երկխոսության հարցից, կարող է ծառայել իբրև երկրորդական քաղաքականություն երկրների անկախության ամրապնդման, զարգացման համար:

- Պարոն դեսպան, ի՞նչ կասեիք վերջերս Երևանում կայացած Ռուսաստան-Հայաստան-Իրան «Քաղաքակրթությունների երկխոսություն» միջազգային համաժողովի վերաբերյալ:

- Այդ համաժողովում ունեցած իմ ելույթում ես մի շարք հանգամանքներ նշել եմ: Համագործակցության շատ բնագավառների չպետք է վերաբերվել հոռետեսորեն, քանզի այլ երկրների հետ էլ կարելի է համագործակցել: Պարզապես որոշակիորեն պետք է տարանջատել քաղաքակրթությունների երկխոսության հարցը հորիզոնական քաղաքականությունից: Ի վերջո, ըստ իս, կարևորն այն է, որ բոլոր երկրները կարողանան ըստ իրենց ազգային շահերի գնահատական տան իրենց հետագա ուղուն: Ինչպես Ժան պոլ Սարտերն է ասում, եթե ընտրություն էլ չկատարես, միևնույն է, էլի ընտրություն արել ես: Ընդհանրապես շահերի և համագործակցության հարցերում պետք է կարողանալ բոլոր մասնիկները հաշվի առնել: Հուսով ենք, որ ցանկացած համագործակցություն նպատակաուղղված կլինի գործակցության առավել ընդլայնմանը, բազմակողմանի ծավալմանը և չի լինի որևէ երկրի դեմ:

> *«... Կարևորն այն է, որ բոլոր երկրները կարողանան ըստ իրենց ազգային շահերի գնահատական տան իրենց հետագա ուղուն:»*

- «Առավոտ» օրաթերթում Իգոր Մուրադյանի հեղինակած հոդվածներից մեկում խոսվում է Ադրբեջանը մասնատելու Իրանի ծրագրի և դրանում Հայաստանի դերի մասին: Ներկայացրեք Ձեր կարծիքը, խնդրեմ:

- Հավանաբար, պատասխան ստանալու համար պետք է դիմել հենց հոդվածագրին: Պետք է նշել, որ մինչև Հայաստանի անկախությունն այս հեղինակը շատ հետաքրքիր հոդվածներ է գրել:

Ընդհանրապես մենք ձգտում ենք բոլոր հարևանների հետ համագործակցություն ծավալել: Դա է մեր քաղաքականության հիմքը, ինչպես նաև ձգտումը՝ չեզոքացնելու ճգնաժամերի և հիմնախնդիրների օջախները: Վերջին մեկ տարվա ընթացքում Իրանի և Պարսից ծոցի արաբական երկրների միջև հարաբերությունները լավ օրինակ կարող են ծառայել նաև այլ բնագավառներում:

Իհարկե, բոլոր տեղերում էլ կան մարդիկ, որոնք ձգտում են որոշակի հիմնահարցեր դիտել կարոտախտի կամ եսասիրական տեսանկյունից: Նախկինում Ադրբեջանի որոշ պաշտոնատար անձանց կողմից նշվածի առնչությամբ որոշակի հայտարարություններ եղել են, բայց, ըստ իս, ժամանակն ապացուցում է, որ նրանք սխալվում են:

- Ըստ Ձեզ, որքանո՞վ են համեմատելի կամ նման Կոսովոյի և Ղարաբաղի հիմնահարցերը:

- Նախ նշեմ, որ Բալկանների մասնագետ չեմ: Որոշակի հանգամանքներ կարող եմ նշել իբրև անձնական կարծիք: Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության շրջանակներում սերբերը հարաբերություններ են ունեցել այլ ժողովուրդների հետ, որոնք ապրում էին այդ ֆեդերացիայում: Նախկինում, դեռևս կոմունիստական ղեկավարության որոք էլ այդ այլազգիների նկատմամբ իրականացվում էր խտրականության քաղաքականություն: Նախկին կոմունիստական ղեկավարներն ընդերքի հարստությունների բաժանման և վերաբաշխման գործում օգտվում էին գենպլանից: Եթե ուշադրություն դարձնենք նախկինում Հարավսլավիայում տեղի ունեցած քաղաքական գործընթացներին, ակնառու կերպով կտեսնենք դրանց անմիջական ազդեցությունն առկա կացության մեջ: Սակայն միաժամանակ այստեղ պետք է նկատի ունենանք նաև, որ չի կարելի պատժելու կամ մեկ այլ անվան տակ ՄԱԿ-ի և նրա Անվտանգության խորհրդի իրավասություններից դուրս որոշակի գործողություններ ծավալել:

Եթե ուշադրություն դարձնենք կողմերի միջև կայացված վերջին համաձայնության մեջ առկա մի նախադասությանն, ապա այնտեղ շեշտվում է միջազգային ուժերի մասին, ինչն ուշադրության է արժանի:

Այժմ այն մասին, թե ինչ կապ ունի Կոսովոյի հիմնահարցը ղարաբաղյան խնդրի հետ: Կարծում եմ, դա նման է նրան, որ մենք ամռանը սպասենք, թե ամպեր կկուտակվեն ու կայծակ ու շանթ կլինի: Այս տարածաշրջանում հարցերը մի քիչ այլ բնույթի են, և չպետք է հարցերը նույնացնելու միջոցով որոշակի այլ քաղաքականություն առաջ տանել: Կարծում եմ, որ բանակցությունների այն գործընթացը և այն ջանքերը, որոնք գործադրվել են Կովկասում հիմնահարցի կարգավորման համար, տարբեր են Կոսովոյի հիմնահարցի հետ՝ ելքերի առումով: Մենք հուսով ենք, որ Կովկասում խաղաղությունը նպատակաուղղված կլինի համագործակցության ու փոխըմբռնման հաստատման համար և ոչ թե Բալկանների գործընթացի նման, որն ավելի շատ, կարծես թե, կապվում է ժամանակ շահելու հետ: Այստեղ մեծ տարբերություն կա:

- Մենք հիշում ենք Իրանի միջնորդական գործունեությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման ուղղությամբ: Հնարավո՞ր են նման նոր քայլեր Իրանի կողմից:

- Այդ հարցն ուղղակիորեն պայմանավորված է և կապվում է տարածաշրջանի իրավիճակի հետ: Եթե ուշադրություն դարձնենք խաղարարար առաքելության մեխանիզմներին և քաղաքական փորձադաշտում վերջին տարիների այն փորձին, որը ձեռք է բերել ԵԱՀԿ-ն, կարող ենք հստակ նշել, որ այդ փորձառության մեջ, այդ գործընթացում բոլոր գործոնները և տարրերը նկատի չեն առնվել: Մենք գտնում ենք, որ խաղաղության և փոխըմբռնման հաստատման համար պայմանները միայն բավական չեն, և անհրաժեշտ է նաև, որ դատշ լինի դրա համար:

- Ինչպիսի՞ն է իրանական կողմի վերաբերմունքն իրանա-ամերիկյան հարաբերությունների վերականգնման նկատմամբ:

- Իհարկե, ես չեմ կարող այստեղ ամբողջապես արտահայտել պաշտոնական Թեհրանի դիրքորոշումը: Մենք մեր տեսակետներն Իրանի արտգործնախարարության միջոցով փոխանցել ենք միջազգային հասարակայնությանը:

Անձնապես կարող եմ այսպես մեկնաբանել. կարծում եմ, նշված հարաբերության մեջ առկա խոչընդոտների մի մասը պետք է տեսնել հեռավոր երկրների, այսպես ասած, վերաբերմունքային չափանիշների և համակարգի մեջ: Դրանք այն խոչընդոտներն են, որոնք մեծամասամբ խոստովանում է ԱՄՆ կառավարությունը: Այդ մասին իր վերջին հեռուստաելույթներից մեկում խոսել է նաև նախագահ Քլինթոնը: Կարծում եմ, որ այստեղ ամենահիմնական և կարևոր հարցն այն է, որ ԱՄՆ-ն վերանայման ենթարկի իր վերաբերմունքի մեխանիզմը մերձավոր Արևելքում, մասնավորապես՝ Իրանի հանդեպ: Սա լուրջ ուշադրության արժանի խնդիր է: Միացյալ Նահանգների վերաբերմունքի փոփոխությունից հետո, բնականաբար, մեր երկրի բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով այս առնչությամբ համապատասխան որոշումներ կկայացվեն:

- Ինչպիսի՞ն է Իրանի վերաբերմունքը դարասկզբին Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ իրականացրած ցեղասպանության փաստի առնչությամբ:

- Մենք ունենք հավատամքային մի սկզբունք, որն ավելի բարձր է դասվում, քան որևէ քաղաքական բանաձև: Հիմք վերցնելով մեր կրոնա-

- Մենք ունենք հավատամքային մի սկզբունք, որն ավելի բարձր է դասվում, քան որևէ քաղաքական բանաձև: Հիմք վերցնելով մեր կրոնական գրքերն ու սուրբ գիրք Ղուրանը կարող եմ ասել, որ երբ որևէ անձնավորություն անմեղ սպանվում է, կարծես թե մի ամբողջ ժողովրդի ենք սպանել: Ակնհայտ է, որ որևէ ցեղասպանություն, որևէ ցեղային բնաջնջում աշխարհի որ կետում էլ որ լինի, ում կողմից էլ, որ իրականացվի, պարտության է դատապարտված՝ լինի դա Բալկաններում, թե աշխարհի մեկ այլ վայրում:

- Այսօր շատ է խոսվում աշխարհի միաբևեռայնության կամ բազմաբևեռայնության մասին: Ո՞ր բևեռում է իրեն տեսնում Իրանը, ո՞ր երկրների հետ համագործակցված:

- Կարծում եմ, նախ և առաջ, միաբևեռ կամ բազմաբևեռ աշխարհի վերաբերյալ տեսակետները պետք է հստակեցվեն: Տնտեսության բնագավառում աշխարհում առկա է չորսից-հինգ բևեռ: Ռազմական բնագավառում, հավանաբար, կարող ենք նշել երեք համակարգեր: Մշակույթի բնագավառում ևս կարող ենք նշել, որ աշխարհում կա եռաբևեռ իրավիճակ: Այս իսկ պատճառով չի կարելի ասել, թե մենք միաբևեռ, թե երկբևեռ աշխարհում ենք: Մենք առնչվում ենք բազմաբևեռ հոսանքների՝ տարբեր ճյուղերում:

Ինչ վերաբերում է Իրանի տեղին այս գործընթացներում, ապա նշեմ, որ մեր երկիրը չունի անկախության օր, աշխարհում այն երբեք չի եղել ենթակառուցվածք: Իհարկե, մենք մեզ իբրև երևակայական բևեռ չենք դիտում, այլ իբրև իրականություն գոյություն ունենք, և եթե ուշադրության արժանանա քաղաքակրթության սահմանագիծը, դա ինքը լիովին կապացուցի այդ: Ինչպես իմ ելույթի վերջում նշեցի, մենք մարդկային ծաղկանոցում մեզ չենք դատապարտում մեկ ծաղկի ընտրությանը:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՀՈՒԼԻՍԻ 15-ԻՆ

«Գորդյան հանգույց» ծրագիր

« Սևանի հիմնախնդիր. տարբեր տեսակետներ»

Կմասնակցեն

ՀՀ Աժ պետահրավական հանձնաժողովի փոխնախագահ
Վիկտոր Դալլաքյանը,
ՀՀ բնապահպանության փոխնախարար
Սամվել Բալոյանը,
Սևան-Հրազդան կասկադի տնօրեն
Մելս Հակոբյանը,
Հայ էկոլոգների միության նախագահ, ՀՀ ԳԱ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի տնօրեն
Ռաֆայել Հովհաննիսյանը

Հուլիսի 15-ին, ժամը 18:00-ին

Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում

Մուտքն ազատ է

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՀՈՒԼԻՍԻ 22-ԻՆ

«Դասախոսությունների շարք» ծրագիր

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, «ՍԻԼ» կոնցեռնի նախագահ
Խաչատուր Սուքիասյանը

Ներկայացնում է

« Ներդրումային քաղաքականությունը Հայաստանում»

Հուլիսի 22-ին, ժամը 18:00-ին

Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում

Մուտքն ազատ է

ԲԱՆԱԽՈՍ

«Դասախոսությունների շարք» ծրագրի տեղեկագիր

Հայաստանի ամերիկյան համալսարան
Հատուկ դասընթացների բաժին

URL:// www.aua.am/aua/extens

Ծրագրի համակարգող՝
Հրայր Զորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58